Առաջին դիվիզիա — 4 գունդ՝ իւրաքանչիւրը 3–ական մարտկոցով և 1 հրետանիի բրիգադ 6 մարտկոցով. հրամանատար՝ զօր. Արեշեան:

Երկրորդ դիվիզիա — նոյն կազմով, հրամանատար՝ գնդ. Սիլիկեան:

Այրուձիի բրիգադ — երկու գունդ չորսական հարիւրեակով և մէկ ձիաւոր հրետանի. հրամանատար՝ գնդ. Ղորղանեան:

Արևմտահայ դիվիզիա. Ա. բրիգադ — Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, Երզնկայի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց, ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ: Բ. բրիգադ — Խնուսի գունդ՝ 2 գում., Ղարաքիլիսայի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց: Գ. բրիգադ — առաջին Վանի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց, Զէյթունի ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ: Դիվիզիայի հրամանատար՝ զօր. Անդրանիկ, սպայակոյտի պետ՝ գնդ. Զենկևիչ:

Տեղական զօրամասեր. — Լոռիի, Շուշիի, Ախալքալաքի և Ղազախի գնդերը՝ 2–ական գումարտակներով և Նուխիի, Ախալցխայի, Լոռիի, Իգդիրի և Խանասորի գումարտակները:

Յարակից մասեր. — բերդային մասեր, բերդային հրետանի, կապի ու հաղորդակցութեան մասեր, պայթուցիկ, առողջապահական, պարենաւորման, հրետանիի, երկաթուղային և այլ մասեր*):

Այս զօրամասերին անցաւ ռուս բանակի ժառանգութիւնը հայկական ճակատում, այլ և, ապագային, հայ հանրապետական բանակի կորիզը կազմելու պատիւը:

---

*) Հայկական Կորպուսի մասին տե՛ս զօր. Ղորղանեանի վերևյիշեալ գիրքը, այլ և **A. Poidebard «Rôle Militaire des Arméniens», 1920 Paris.** և **Commandant M. Larcher, «La Guerre Turque dans la Guerre Mondiale», 1926, Paris.**